

ԱՌ ԲԱՐԵՐԱՐ

Նորակերտ դասատու

Պ . Պ . Տ .

Թէ բուռն ի սիրտ Բարերարիդ յիշատակ՝
Դըրդէ զլեզուս յերախտեաց քաղցրը նըւագ ,
Ընդէր հանդոյն չունիցի ձայն բաւական
Ջներքինն հանել ի վեր ըզկիրս ըզգացման :
Հարազատիդ նախանձաւոր վեհագին՝
Առաքինւոյն կըցորդ արեան եւ ձեռին ,
Որ ըզբարեաց հեղոյր ըզձիրս աննախանձ
Եւ ողջունէր յերախտագիւտ սերտ անձանց :
Այլ էր զոգւոց մեր ուխտ հանեալ չեւ յարձան՝
Բարեացն եղծիչ կոյր բաղդ էարկ անդ խափան :
Արդ յերեւել Հարազատիդ յայս կըղզեակ ,
Իւրն եւ Գոյին զոյգ ամբառնան յիշատակը
Ի գեղեցիկ դաստակերտիդ ճակատու՝
Դրոշմեալ անուանցդ ընդդէմ ելիցն արեւու .
Թէ Յակոբայ - Պօղոսի Տիւզ՝ այս նշան
Մաղթէ օրհնիս յերկինս եւ յազգըս մարդկան :
Յերբ ի նոցունց յարդարեալ յայսմ ի տեղուջ
Մըխիթարայ մարդին մանկունք յիմաստ ողջ ,
Ձ՛ առ ի վերուստն ընդունելով լոյս շնորհաց
Սըփռել ըստ կար ձեռին յօճան աշխարհաց .
Որով ընդ մեզ շնորհապարտ պարք ապագայց
Տեառնըդ Տիւզեանց Քեզ՝ ծանիցին անմոռաց :

Այս դասատունս մեր իսկ մխիթարեան վանաց բարձրագոյն դասու ուսումնաւորանին (վարժարանի) մէջ հիմնեցաւ անցեալ տարի և օրհնեցաւ այս օրերս , հին և փոքր շինուածի մը տեղ , որ գրեթէ յետ դարու և կիսոյ՝ իր նոր վարժապետաց քաջալերիչ և օժանդակ մեծ Բարերարին Հարազատը՝ դտաւ իրեն ընդարձակիչ : Մինչդեռ առաջնոյն՝ ՅԱԿՈԲԱՅ ՏԻԻՋԵԱՆ՝ դեռ սգալի և միշտ օրհնելի քնարանին քով կը ստիպուիմք նոր և տարածամ մահարձանաց վրայ նոր տխրութեամբ հանգստեան մաղթանք սփռել , հարկադրիմք երկրորդին՝ ՊՕՂՈՍ ՊԷՅԻ՝ բարեքնալ անգամ մը յայտնաբանել , մաղթելով իր երկար կենաց այսպիսի մնայուն և օրհնաբեր յիշատակաց ծնունդներ . հրատարակելով այս Դասատան բացման հանդիսին՝ հոն վարժողաց նուագներէն մէկն , որ է վերոյգրեալն :

